

ԿՈՄԻՏԱՍՅԱՆ ՔՆԱՐ*

Մեր հայ գավառն է խավար,
Տգիտության է ավար.
Ուսում տարեք
Ու լույս վառեք,
Ու հույս վառեք,
Հայ տգետը վտարեք:

Պանծա՛ դու, հայ միություն,
Գյուղին տվիր հայ դպրոց,
Սրտի, մտքի կուռ հնոց.
Պանծա՛ դու, հայ միություն,
Պանծան հայեր բարեգործ.
Հայուն՝ դպրո՜ց,
Հայո՛ւ դպրոց:

Մեր հայ երկիրն անապատ,
Ու հայն ընկել պատեպատ.
Գութան տարեք
Ու հող վարեք,
Ու խոր վարեք,
Հողի կուրծքը պատառեք:

Պանծա՛ դու, հայ միություն,
Գյուղին տվիր հուր գութան,
Որ գյուղացիք արտ փութան,
Պանծա՛ դու, հայ միություն,
Մաճկալ, հոտաղ ձայն կուտան՝
Հայուն՝ գութան,
Հայու գութան:

ՄԱՅՐԻԿԻՍ ՕՐՈՐԸ

(Հատվածներ)

Դեռ արգանդում՝ մայրիկը ինձ
Վարդ էր բուրում, ոռոգում.
Եվ իր հոգում այգ-արևով
Գուրգուրում ու նորոգում:
Ծընած օրեն մայր շընթներով
Սեր էր վառում օրորում,
Արև-լուսին հոգվով-մընքով
Նընկարում ու բոլորում:
Հայր զարկերով արի-արի
Խոսում էր իմ երակում,
Մայր կաթերով արյուն-արյուն
Հոսում էր ու կերակրում:
. . . . . .

Քեզի տեսնեմ, ի՛մ հատորիկ,
Կյանքիս ուղին սիրազեղ,
Հայտ ու անհայտ դու որոնե,
Քեզի՛ լինին իրազեկ:
Մի՛ թափառե կյանքի պարապ
Անապատում դու իզուր,
Քե՛զ պահապան սուրբ հավատո
Լուսո, սիրո, Լույս ու Հուր:
Օրի՜կ օրին,
Իմ Անուշին:

. . . . . .

Գիշեր-գիշեր, լուսնե-լուսին
Մընքիս ծովը խորացավ,
Ցորեկ-ցորեկ, արև-արև
Հոգուս հովը զորացավ:
Մորըս կընտակն ալիք-ալիք
Սընրտիս ավանդ պահեցի,
Երկրե-երկին, երկնե-երկիր
Ազատ-արձակ սահեցի:
Օրի՜կ-օրիկ՝
Գարուն նորիկ:
Երգ ու տաղեր սարեն, ձորեն
Տուն ու ամպով զարթելով
Տուն ու տաճար սընրտի խորեն
Բույր ու ձայնով բարդելով:
—«Օրե՜ր սարին
ու տաճարին»:
Կանաչ երկրի մընթնոլորտը
Պատառ-պատառ հաղթեցի,
Կապույտ երկնի լուսո խորը
Կատար-կատար գաղթեցի:
Վարդի բույրով, լույս համբույրով
Գիրկըս թընուավ Մայրիկը,
Ձեռքես բընեց, առավ-տարավ,
Տարավ ցուցուց Հայրիկը:
—«Երնեկ օրին՝
Երկնի խորին»:

---

* Նմուշներ Կոմիտաս վարդապետի քնարերգությունից: